

ՎԵՐԱՆԿԱԽԱՑԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎ ՆՈՐԱՍԵՂԾ ԱԴՐԲԵԶԱՆԻ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

(1918 - 1920)

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՏՈՐ Ա

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ  
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ  
(1918 թ. մայիս – 1918 թ. հոկտեմբեր )

# ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Ըսթերցողին առաջարկվող այս գիրքը իրենից նեկայացնում է առաջին հատորը այն ծավալուն աշխատության (ներկայիս մտահղացմամբ՝ եռհատորյակի), որտեղ պետք է ընդգրկված լինեն 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսն ընկած ժամանակամիջոցին առնչվող մի շարք արխիվային փաստաթղթեր և այլ նյութեր, որոնք վերաբերում են վերանկախացած Հայաստանի ու նորաստեղծ Աղրբեջան անվանումը ստացած պետության միջև այդ ժամանակահատվածում ձևավորված ազգամիջյան և միջազետական հարաբերություններին:

Աշխատության առաջին հատորում (ԳԻՐՔ Ա) անդրադարձ է արվում այդ հարաբերությունների ընթացքին 1918թ. հունիսից մինչև 1918թ հոկտեմբերն ընկած ժամանակահատվածը: Այսինքն Անկախության հռչակումից մինչև Մուղրոսի զինադադարի կնքելը, ինչով ազդարարվեց Առաջին Աշխարհամարտի ավարտը: Հենց այդ ժամանակաշրջանի Հայաստան-Աղրբեջան հարաբերություններին առնչվող համապատասխան նյութերն ու փաստաթղթերն ել ներկայացված են այս հատորում: Ճիշտ է, քերված ցուցակում առկա են նաև որոշ քանակի փաստաթղթեր, որոնք առնչվում են նշված հիմնական ժամանակաշրջանից ավելի վաղ, կամ ավելի ուշ ընկած հատվածներին, սակայն դրանք քերված են, քանզի տրամաբանական առումով անմիջականորեն կազմված են հիմնական ժամանակահատվածին վերաբերող փաստաթղթերի հետ:

Հատորը կազմված է երկու քաճնից: Բ Ա Ժ Բ Ն Լ-ը պարունակում է նյութեր և փաստաթղթեր, որոնք առնչվում են 1918թ. մայիս-հոկտեմբեր ժամանակահատվածում հայ-աղրբեջանական ազգամիջյան և միջազետական հարաբերություններին վերաբերող հարցերին՝ ընդամենը 143 փաստաթուղթ:

**ԲԱԺԻՆ** II-ում ներկայացված են փաստաթղթեր, որոնք վերաբերում են այդ նույն ժամանակաշրջանում Բաքվում և նրա շուրջ ծավալվող իրադարձություններին: Նման բաժին առանձին ներկայացնելու անհրաժեշտությունն, ըստ մեզ, պայմանավորված է այն փաստով, որ այդ ամբողջ ժամանակահատվածում Բաքուն գոյատևել է Ադրբեջանից դուրս և նրա ճակատագիրն, ի վերջո, որոշվել է ոչ թե Ադրբեջանի, այլ Աշխարհամարտում ներգրավված իրական ուժային կենտրոնների կողմից: Փաստաթղթերը որոշակիորեն լուսաբանում են նաև հայկական գործոնի տեղն ու դերը այդ ամիսներին Բաքվի հետ կապված իրադարձություններում: Այդ բաժնում ներկայացվում է ընդամենը 51 փաստաթուղթ:

Հատորում ներկայացված նյութերի վերաբերյալ ցանկանում ենք նշել, որ ամեննեին չի բացառվում, որ դրանք ավելի վաղ արդեն հրապարակված, կամ օգտագործված լինեն այլ հեղինակների կողմից, որոնց վրա տվյալ գրքում հղումներ չեն տրվել: Այստեղ գիտական էթիկայի կանոնների խախտման հարց չի ծագում, քանզի , նախ, միանգամայն հասկանալի է, որ պարզապես ֆիզիկապես հնարավոր չէ «սանրել» այդ ամբողջ գրականությունը, որ պարզվի, թե որտեղ և ինչ փաստաթուղթ է օգտագործված, և երկրորդը, մենք օգտվել ենք անմիջականորեն արխիվային ֆոնդերից ու հատորում, փաստաթղթի ամբողջական բովանդակության հետ մեկտեղ, ներկայացվում է նաև փաստաթղթի արխիվային պատճենը:

Փաստաթղթերի հիմնական մասը վերցված է Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ֆոնդերից, մի մասը՝ Ռուսաստանի առգիլ-քաղաքական պատմության պետական արխիվի (Российский Государственный архив социально-политической истории – РГАСПИ) Ա.Ի. Միկոյանի ֆոնդից: Զգալի թվով փաստաթղթեր վերցված են 1998 թ. Բաքվում լույս տեսած «АЗЕРБАЙДЖАНСКАЯ ДЕМОКРАТИЧЕСКАЯ РЕСПУБЛИКА (1918-1920), Внешняя политика (Документы и материалы, БАКУ-1998)» ժողովածություն: Բաքվի մարտերի մասնակից, դաշնակցական Զաքար Յովյանի հուշերը

կազմողին մինչև իրենց գրքի լույս տեսնելը սիրով տրամադրել են «Զարար Եօյան անցեալի յուշեր» գրքի կազմողները՝ Աղասի Ազիգեանը և Աշոտ Սիմոնեանը, որոնց հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը։ Մյուս բոլոր, ավելի փոքրաքանակ նյութերի աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները բերված են տեքստում ծանոթագրությունների տեսքով։

Այլ լեզվով, հիմնականում ոռուսերեն բոլոր փաստաթղթերին կից բերված են հայերեն թարգմանությունները (որոշ դեպքերում՝ համառոտագրությունները), որոնք իրականացրել է կազմողը։ Համակարգչային մուտքագրում չի կատարվել հայալեզու մերենագիր և ձեռագիր այն փաստաթղթերի համար, որոնք կարդացվում են առանց որևիցել դժվարության։

Կազմողն իր շնորհակալությունն է հայտնում պատմագետ Մայր Բաբայանին՝ կարևոր փաստաթղթեր տրամադրելու համար, Հայկական ճարտարապետության ուսումնասիրության (ՀՃՈՒ) հիմնադրամի գործադիր տնօրեն Էմմա Աբրահամյանին ու նույն հաստատության աշխատակից Անուշ Համբարձումյանին՝ մի շարք ձեռագրեր վերծանելու և մուտքագրելու համար, ինչպես նաև դեսպան Արա Պապյանին ու պատմական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ Վ. Մելիքյանին, Ա. Հակոբյանին՝ օգտակար քննարկումների, և պատմական գիտությունների դոկտոր Գ. Խուդինյանին՝ որոշ հարցերի պարզաբանման համար։

## Վլաղիմիր Հարությունյան